# ᲡᲐᲣᲑᲜᲝ ᲡᲐᲐᲠᲩᲔᲕᲜᲝ ᲙᲝᲛᲘᲡᲘᲘᲡ ᲗᲐᲕᲛᲯᲓᲝᲛᲐᲠᲘᲡ ᲡᲐᲛᲐᲮᲡᲝᲕᲠᲝ ᲘᲜᲡᲢᲠᲣᲥᲪᲘᲐ

# Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ուղեցույց հրահանգ

საქართველოს პრეზიდენტის არჩევნები

Վրաստանի նախագահի ընտրություններ

2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները ........................................................... 3

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության նախորդ օրը .............. 7

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության օրը ...... 11

# Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները

## 1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի հետ կապված լիազորություններ.

- Հրավիրում եք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստ:
- Վարում եք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը:

## 2. Վարչական գործառույթներ.

- Իրավունք ունեք առաջադրանք տալ հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամների:
- Իրավունք ունեք, իրավասությունների շրջանակներում, հրապարակել կարգադրություն:
- Ստանում եք և Ձեր մակագրությամբ բաժանում տեղամասային ընտրական հանձնաժողով մտած ընտրական փաստաթղթերը և տեղամասային ընտրական հանձնաժողովի անունով մտից գրագրությունը:
- Պատասխանատու եք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի, գույքի և այլ նյութերի ընդունման, պահպանման և ըստ նշանակման տրամադրման համար:
- Հրապարակայնության ապահովման համար նկատի՛ ունեցեք, որ ընտրական տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն.
  - ☐ Տեղամասային ընտրական հանձնաժողովի կոնտակտային հեռախոսի համարները և այլ տվյալներ,

- ընտրական վարչակազմի այն իրավական ակտերը, որոնք կվերաբերեն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությանը,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի և հանձնաժողովի նախագահի կարգադրությունները,
- ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակն, առանց լուսանկարների), ընտրողների ցուցակներում փոփոխությունների ընդգրկման և անճշտությունների բողոքարկման կարգը և ժամկետները:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

- Քվեարկության օրվանից առնվազն երկու օր առաջ Ձեզ կփոխանցվեն ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը՝ սեղանի ցուցակը, և հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը՝ պատի ցուցակը):
- Հանրային տեղեկատվության համար հատկացված պատի ցուցակի նախնական տարբերակը պետք է հանեք և նույն տեղում փակցնեք ճշգրտված տարբերակը:

# Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության նախորդ օրը (27 հոկտեմբերի)

## 1. Քվեարկության շենքի կազմակերպման հետ կապված լիազորություններ.

- պատասխանատու եք քվեարկության շենքի կազմակերպման համար, նկատի՛ ունեցեք.
  - ☐ քվեարկության շենքում յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է կազմակերպվի առնվազն մեկ քվեախցիկ, որտեղ պետք է լինի մեկ գրիչ (անհրաժեշտության դեպքում, պետք է նախատեսվի սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների համար հարմարեցված քվեախցիկ),
  - ☐ պետք է տեղեր առանձնացվեն ընտրողների գրանցման համար և տեղադրվեն սեղաններ՝ գրանցում իրականացնող անձանց քանակին համապատասխան,
  - ☐ տեսանելի տեղում պետք է տեղադրվի ընտրական քվեատուփը,
  - ☐ ընտրական քվեատուփի մոտ պետք է տեղադրվի սեղան՝ հատուկ ծրարների համար:
  - ☐ պետք է առանձնացվի տեղ՝ լուսանկարահանման և տեսանկարահիմանման համար (նպատակահարմար է փակցվի մակագրություն՝ լուսանկարահանման և տեսանկարահիմանման տեղ):
- Քարտուղարի սեղանի վրա պետք է տեղադրվի խոշորացնող ոսպնյակ՝ տեսողական խնդիրներ ունեցող ընտրողների համար, և հատուկ շրջանակ՝ տեսողությունից զուրկ ընտրողների համար:
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցված լինեն.

- ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
- ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
- շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
- նախագահության թեկնածուների ցուցակը,
- քվեարկելու հրահանգը և ԿԸՀ-ի կողմից սահմանված, ընտրական քվեաթերթիկի լրացման կարգը,
- քաղվածք Օրենքից, թե որ դեպքում է ընտրական քվեաթերթիկն անվավեր,
- քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություն,
- եթե ընտրական քվեաթերթի մեջ ներառված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, քվեարկության շենքում և գաղտնի քվեախցերում հայտարարություն այդ մասին:

**2. Ընտրական փաստաթղթերի ընդունման հետ կապված լիազորությունները.**

Հիշեցե՛ք. քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պետք է ստանաք ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Ստանալիս համեմատե՛ք փոխանցված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակը հանձնման-ընդունման ակտում տեղ գտած տվյալների հետ: Ստուգե՛ք, որ քվեաթերթիկների վրա նշված լինեն Ձեր ընտրական տեղամասի և ընտրատարածքի համարները:

# Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության օրը (28 հոկտեմբերի)

## Ժամը 07:00-08:00

- ☐ Ժամը 07:00-ին բացե՛ք ընտրական տեղամասը, հեռախոսով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք ընտրական տեղամասը բացելու և հանձնաժողովի անդամների քվորումի (7 անդամ) մասին:

---

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և ցուցադրական արձանագրությունը (փակցվում է բոլորի համար տեսանելի տեղում):

---

- ☐ Ստուգե՛ք քվեարկության շենքում գտնվող իրավասու անձանց հավատարմագրման վկայականները (ուժի մեջ է ինքնությունը հաստատող վկայականի հետ): Հիշե՛ք, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեն միայն Օրենքով սահմանված համապատասխան իրավազոր անձինք:

---

- ☐ Ի ցույց բոլորի, ստուգե՛ք այն փաթեթի ամբողջականությունը, որում զետեղված է հանձնաժողովի հատուկ կնիքը և բացե՛ք այն: Հանձնաժողովի քարտուղարը կնիքի համարը մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում:

---

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամների որոշման համար անցկացրե՛ք վիճակահանություն (վիճակահանությանը չեն մասնակցում տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձինք):

Հիշե՛ք, եթե վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը հրաժարվում է իրեն շնորհված գործառույթի իրականացումից, նա կորցնում է հանձնաժողովի անդամների այլ գործառույթների բաշխման համար անցկացվելիք հերթական վիճակահանությանը մասնակցելու իրավունքից:

Հիշե՛ք, որ վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել միևնույն կուսակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամներ:

---

☐ Անցկացրե՛ք հերթական վիճակահանությունը հանձնաժողովի անդամների միջև՝ մնացած գործառույթների (ընտրողների հոսքը կարգավորող, ընտրողների գրանցում իրականացնող, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամներ) բաշխման համար: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

---

☐ Հայտարարե՛ք ընտրողների թիվը ընտրողների միասնական ցուցակում, ընտրողների հատուկ և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակներում (այսպիսինի գոյության դեպքում): Հանձնաժողովի քարտուղարը տվյալները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ (ցուցադրական արձանագրության և քվեարկության օրվա գործավարության մատյանում հատուկ ցուցակի մեջ ընտրողների թիվը գրանցվում է քվեարկությունն ավարտվելուց հետո):

---

☐ Հայտարարե՛ք ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակը, հանձնաժողովի քարտուղարը ստացած քվեաթերթիկների թիվը գրանցում է ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում:

☐ Ստուգե՛ք, որ ընտրական քվեատուփերը դատարկ լինեն՝ և՛ հիմնականը, և՛ շրջիկը (տեղափոխվող), քվեատուփերը կնքե՛ք անհատական համար ունեցող կնիքով: Հանձնաժողովի քարտուղարը քվեատուփի կնքի համարները և կնքման ժամանակը գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

---

☐ Ընտրողների գրանցում իրականացնող յուրաքանչյուր անդամի փոխանցե՛ք. ցուցակ՝ 300 ընտրողով (ընտրողների գրանցում իրականացնողներից մեկին փոխանցե՛ք նաև՝ ընտրողների հատուկ ցուցակը), քվեաթերթիկների մեկական նոթատետր, նշմարման հեղուկ, գրանցում իրականացնողի կնիք: Հանձնաժողովի քարտուղարը գրանցում իրականացնողների կնիքների համարները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ և 9-րդ էջերում:

**Նկատի՛ ունեցեք.**

✓ Գրանցում իրականացնողները պետք է վերստուգեն նոթատետրում քվեաթերթիկների քանակի ճշգրտությունը, ինչից հետո գրանցում իրականացնողների հետ պետք է ստորագրեք ընտրական քվեաթերթիկների տիտղոսաթերթի վրա եղած ընդունման-հանձնման ակտը:

✓ Եթե գրանցում իրականացնողների կնիքները անհրաժեշտ քանակից պակաս լինեն կամ կնիքը վնասվի, նվազեցրե՛ք գրանցում իրականացնողների թիվը:

✓ Գրանցում իրականացնողներից մեկի մոտ տեղադրե՛ք խոշորացնող ոսպնյակ տեսողական խնդիրներ ունեցող ընտրողների համար և հատուկ շրջանակ՝ տեսողությունից զուրկ ընտրողների համար:

---

☐ Ընտրողների հոսքը կարգավորողին փոխանցե՛ք նշմարումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտեր:

---

☐ Քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկողին փոխանցե՛ք հատուկ ծրարները և հիմնական ընտրական քվեատուփը:

- ☐ Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո, անհապաղորեն, մինչև քվեարկության սկսվելը, հանձնաժողովի քարտուղարի հետ լրացրե՛ք ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևաթուղթը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների)։ Ուշադրությու՛ն դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները։

---

## Ժամը 08:00-ից

- ☐ Ընտրական տեղամաս եկած առաջին ընտրողն անցնում է գրանցումը և ստանում ընտրական քվեաթերթիկը։ Դրանից հետո ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին, որ առաջին ընտրողի մասին տվյալները (անունը, ազգանունը և Վրաստանի քաղաքացու անձնական համարը) գրանցի ստուգողական թերթի վրա և ստորագրել տա նրան։ Հանձնաժողովի քարտուղարը առաջին ընտրողի տվյալները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում։

  Ստուգողական թերթի մեկ օրինակը գցե՛ք հիմնական ընտրական քվեատուփի մեջ, երկրորդ օրինակը՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ (այսպիսինի գոյության դեպքում), իսկ երրորդ օրինակը պահե՛ք։

---

- ☐ Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո, հեռախոսով տեղեկացրե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ հիմնական քվեատուփը և տեղափոխվող քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում) կնքելու, ստուգողական թերթը/ թերթերը համապատասխան քվետուփի/քվեատուփերի մեջ գցելու և քվեարկությունը սկսելու մասին։

---

## Քվեարկության ընթացքում նկատի՛ ունեցեք.

- ■ Եթե նշմարումը ստուգող հատուկ սարքը հայտնաբերում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը։ Հանձնաժողովի քարտուղարը ընտրողի ով լինելը նշում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում։

- Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ստորև թվարկված տվյալներից (անուն, ազգանուն, ծննդյան ամիս, ամսաթիվ, տարեթիվ, հասցե) գոնե երեքը:

- Եթե ընտրողների գրանցում իրականացնողն ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, նա տվյալ անհամապատասխանությունը հաստատելու հարցով պետք է դիմի Ձեզ:

  Եթե հաստատեք անհամապատասխանությունը, ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին քվեարկության օրվա գործավարության մատյանում անել համապատասխան գրառում (ընտրողի անունի, ազգանվան և ընտրողների ցուցակում նրա հերթական համարի նշումով): Սույն գրառումը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատե՛ք ստորագրություններով: Հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին պետք է կցի ստորագրությամբ հաստատված ընտրողի կողմից ներկայացված ինքնությունը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

  Եթե չեք հաստատի անհամապատասխանությունը, ընտրողների գրանցումն իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել իր առանձնահատուկ կարծիքը: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում պետք է անի համապատասխան գրառում (ընտրողի անվան, ազգանվան և ընտրողների ցուցակում նրա հերթական համարի նշումով): Սույն գրառումը գրանցում իրականացնողը և հանձնաժողովի քարտուղարը պետք է հաստատեն ստորագրություններով: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանին պետք է կցի իր ստորագրությամբ հաստատված ընտրողի կողմից ներկայացված ինքնությունը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

  Վերոնշյալ ընթացակարգը կատարելուց հետո ընտրողին տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:

- Եթե ընտրողը հրաժարվում է անցնել նշմարման ընթացակարգը, նրան չտաք քվեարկությանը մասնակցելու իրավունք:
- Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տրվի ստորագրել նույն սյունակում: Միևնույն ժամանակ, ցուցո՛ւմ տվեք գրանցում իրականացնողին նշվածի վերաբերյալ գրել բացատրագիր (ընտրողի անվան, ազգանվան և ընտրողների ցուցակում նրա հերթական համարի նշումով):
- Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վնասել է քվեաթերթիկը, ցուցո՛ւմ տվեք ընտրողների գրանցումն իրականացնող անձին փոխել ընտրողի վնասված քվեաթերթիկը նորով: Ընտրողի ներկայությամբ կտրե՛ք վնասված քվեաթերթիկի անկյունը, վրան գրեք՝ «վնասված է» և ստորագրե՛ք և առանձին պահե՛ք:
- Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, ուշադրությո՛ւն դարձրեք, որ օգնելու համար քվեախցիկ չիրավիրվի հանձնաժողովի անդամ, նախագահի թեկնածու, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցիչ և դիտորդ: Ընտրողին կարող է օգնություն ցուցաբերել ցանկացած անձ, բացի վերոնշյալ անձանցից:
- Եթե ընտրողը ֆիզիկական վիճակի պատճառով (վերին վերջավորություններ չունենալ) չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, այս դեպքում հիշեցրե՛ք ընտրողների գրանցում իրականացնողին, որ ընտրողին քվեաթերթիկ փոխանցելիս՝ համապատասխան ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում անի գրառում «ֆիզիկական վիճակ» և նշվածը հաստատի ստորագրությամբ:
- Այն ընտրողը, որին միասնական ցուցակում շնորհված է «գտնվում է արտասահմանում» կամ «հյուպատոսական հաշվառման է» կարգավիճակ, քվեարկությանը մասնակցում է ընդհանուր կարգով:
- Այն ընտրողը, որին միասնական ցուցակում շնորհված է «գրանցված է արտասահմանում» կարգավիճակ, քվեարկությանը մասնակցում է արտասահմանում ստեղծված համապատասխան ընտրատեղամասում:

**ժամը 09:00-ից**

- ☐ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության անցկացումը հանձնարարե՛ք վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի 2 անդամներին և նրանց փոխանցե՛ք.
    - ☐ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
    - ☐ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և ընտրողների գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակի ընտրական քվեաթերթիկներ,
    - ☐ հատուկ ծրարներ (շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի ցուցակում առկա ընտրողներին համապատասխան),
    - ☐ կնքված շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը, որում պետք է զետեղված լինի ստուգողական թերթը:
    - ☐ շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի կնքման համար հատկացված կնիքը (տեղափոխվող ընտրական քվեատուփը կնքվում է շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփով ընտրությունն ավարտվելուց հետո):

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամներին փոխանցված քվեաթերթիկներիի քանակը, ինչպես նաև շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ընտրատեղամասից տանելու ժամանակը:

---

**ժամը 10:00, 12:00, 15:00, 17:00**

Խնդրե՛ք ընտրողների գրանցումն իրականացնողներին, առանց քվեարկության ընթացակարգին խանգարելու, հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իրենց կողմից տրամադրված ընտրական քվեաթերթիկների քանակը (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված

վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը)։ Տրված քվեաթերթիկների թիվը կարելի է որոշել հանձնաժողովի նախագահից ստացած քվեաթերթիկների թիվը ընտրողների գրանցում իրականացնողի մոտ մնացած քվերաթերթիկների հետ համեմատելով։

Վերստուգե՛ք տվյալների ճշգրտությունը հետևյալ բանաձևով.

**Ընտրողներին տրված ընտրական քվեաթերթիկների թվից** – **Վնասված ընտրական քվեաթերթիկների թիվը** = **Ընտրողների ստորագրությունների թվին**

Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցումն իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, իսկ նրանում առկա տվյալները նախատեսեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս։

Գումարե՛ք յուրաքանչյուր գրանցում իրականացնողից ժամը 10:00, 12:00, 15:00, 17:00-ին ստացած ստորագրությունների թիվը, նրանց գրված բացատրագրերի (այսպիսինի գոյության դեպքում) նախատեսմամբ և տվյալներն անհապաղորեն ուղարկե՛ք կարճ տեքստային հաղորդագրությամբ (sms-ով) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրամադրված հեռախոսահամարին։

Ժամը 12:00-ին և ժամը 17:00-ին ընտրողների գրանցումն իրականացնողների հետ հաշված, ընտրողների ցուցակներում քվեարկության մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը հանձնաժողովի քարտուղարը նշում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ։

**Գրանցում իրականացնողներից ստացած տվյալներն արտացոլեք աղյուսակում**

| Վերստուգեք տվյալները | | Գրանցում իրականացնող | | | | | Ուղարկեք SMS-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | |
| ժամը 10 | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագրությունների գումարը ⇩ |
| | Վնասված քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թիվը | | | | | | |
| ժամը 12 | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագրությունների գումարը ⇩ |
| | Վնասված քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թիվը | | | | | | |
| ժամը 15 | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագրությունների գումարը ⇩ |
| | Վնասված քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թիվը | | | | | | |
| ժամը 17 | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագրությունների գումարը ⇩ |
| | Վնասված քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թիվը | | | | | | |

Վերստուգե՛ք տվյալների ճշգրտությունը հետևյալ բանաձևով. գրանցում իրականացնողների կողմից տրված ընտրական քվեաթերթիկների թվից - վնասված քվեաթերթիկների թիվը = ընտրողների ստորագրությունների թվին:

## Մինչև ժամը 20:00-ն

Շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ժամը 20-ից ոչ ուշ: Շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելուն պես ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին քվեարկության օրվա գործավարության մատյանում ստուգել շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի մեջ եղած ստորագրությունների, չօգտագործված կամ/և վնասված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում շրջիկ (տեղափոխվող) քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ: Բացատրագրում արտացոլված տվյալները նկատի՛ ունեցեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս:

Կտրե՛ք վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի անկյունը, վրան գրե՛ք «վնասված է» և ստորագրե՛ք: Հանձնաժողովի քարտուղարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի մեջ եղած ստորագրությունների թիվը, չօգտագործված ընտրական քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելու ժամանակը գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

## Ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը

- ☐ Ժամը 20:00-ին քվեարկությունն ավարտված հայտարարե՛ք: Հանձնարարե՛ք հանձնաժողովի անդամներից մեկին հաշվել հերթում կանգնած ընտրողների թիվը (այսպիսինի գոյության դեպքում): Հանձնաժողովի քարտուղարը նշված տվյալները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում: Քվեարկությունն ավարտվելուց հետո փակե՛ք ընտրատեղամասի դուռը և կնքե՛ք ընտրական քվեատուփի ճեղքը:

- ☐ Հանձնարարե՛ք հանձնաժողովի քարտուղարին քվեարկության օրվա գործավարության մատյանի 26-րդ էջում նշել քվեները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց տվյալները:

- ☐ Կարևոր է, որ քվեարկությունն ավարտվելուց հետո, մինչև վիճակահանության անցկացումը, յուրաքանչյուր ընտրողների գրանցում իրականացնողի հանձնարարե՛ք հաշվել ընտրողներին տրված ընտրական քվեաթերթիկների (շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի համաձայն տրված քվեաթերթիկների նախատեսմամբ), վնասված ընտրական քվեաթերթիկների և ընտրողների ստորագրությունների թիվը, իրենց ձեռքի տակ եղած միասնական և հատուկ ցուցակներում (իրենց կողմից գրված բացատրագրերում նշված տվյալների նախատեսմամբ):

Տրված քվեաթերթիկների թիվը կարելի է որոշել հանձնաժողովի նախագահից ստացած քվեաթերթիկների թիվը ընտրողների գրանցում իրականացնողի մոտ մնացած քվեաթերթիկների հետ համեմատելով:

Տվյալների ճշտությունը վերստուգե՛ք հետևյալ բանաձևով.

**Ընտրողներին տրված ընտրական քվեաթերթիկների թվից** — **Վնասված ընտրական քվեաթերթիկների թիվը** = **Ընտրողների ստորագրությունների թվին**

Եթե տվյալների միջև անհամապատասխանություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնողին հանձնարարե՛ք կրկին հաշվել և ճշգրտել քանակը: Եթե տվյալների միջև կրկին հայտնաբերվի տարբերություն խնդրե՛ք ընտրողների գրանցում իրականացնողին բացատրագիր գրել, իսկ դրանում արտացոլված տվյալները նկատի՛ ունեցեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս:

---

☐ Վերոնշյալ տվյալները որոշելուց հետո, գրանցում իրականացողներին հանձնարարե՛ք հաշվել քվեարկության մասնակից ընտրողների գենդերային տվյալները (կանանց թիվը) ընտրողների բոլոր տեսակի ցուցակներում: Տվյալները փոխանցե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

**Գրանցում իրականացնողներից ստացած տվյալներն արտացոլեք աղյուսակում**

<table>
<tr><td colspan="2" rowspan="2">Վերստուգեք տվյալները</td><td colspan="5">Գրանցում իրականացնող</td><td rowspan="2">Ուղարկեք SMS-ով</td></tr>
<tr><td>I</td><td>II</td><td>III</td><td>IV</td><td>V</td></tr>
<tr><td rowspan="4">ժամը (20)</td><td>Տրված քվեաթերթիկներ</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td rowspan="2">Ստորագրությունների գումարը<br>⇩</td></tr>
<tr><td>Վնասված քվեաթերթիկներ</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ստորագրությունների թիվը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ընտրություններին մասնակցած կանանց թիվը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>

- ☐ Ձայները հաշվելու ընթացակարգը սկսելու նպատակով հանձնաժողովի անդամների միջև անցկացրե՛ք վիճակահանություն չորս հաշվողների որոշման համար: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

---

- ☐ Վիճակահանություն անցկացրե՛ք ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից ոչ ավելի, քան 2 ներկայացուցչի որոշման համար, որոնք հաշվողների հետ մասնակցում են իսկական (վավեր) կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվելու գործընթացին: Հիշե՛ք՝ վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամներն էլ վիճակահանությամբ որոշված հաշվողներ են: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

---

- ☐ Դիտորդների միջև վիճակահանություն անցկացրե՛ք՝ 2 վերահսկողի որոշման համար, եթե դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ չեն կարողանա ընտրել ընտրական քվեաթերթիկները հաշվելու ընթացակարգը վերահսկող անձանց: Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

---

- ☐ Հաշվողներին ցո՛ւցում տվեք հաշվել ընտրողների ստորագրությունների քանակն ընտրողների միասնական ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում):

  Հանձնաժողովի քարտուղարը հաշվողների կողմից հաշված ընտրողների ստորագրությունների թիվը, ընտրողների գրանցում իրականացնողների կողմից գրված բացատրագրերում նշված տվյալների նախատեսմամբ (այսպիսինի գոյության դեպքում) գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և ցուցադրական արձանագրության մեջ:

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին ցուցո՛ւմ տվեք առանձին-առանձին փաթեթներում դասավորել ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) սեղանի տարբերակները, չօգտագործված և վնասված քվեաթերթիկները: Հանձնաժողովի քարտուղարը մինչև փաթեթի մեջ տեղավորելը պետք է կտրի չօգտագործված քվեաթերթիկների անկյունները:

---

- ☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք առանձին-առանձին կնքել ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի սեղանի տարբերակները, ինչպես նաև չօգտագործված և վնասված քվեաթերթիկների տոպրակները և ընտրողների գրանցում իրականացնողների կնիքները:
Կնքման գծի վրա ստորագրե՛ք հաշվողների հետ: Փաթեթի վրա նշե՛ք ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անվանումը, համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը:

## Քվեատուփի բացելը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների լրացումը

- ☐ Ստուգե՛ք քվեատուփի և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) կնիքների ամբողջականությունը:

---

- ☐ Նախ՝ բացե՛ք շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և որոշում են դրա և հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի նույնականությունը:

---

- ☐ Բացե՛ք հիմնական ընտրական քվեատուփը: Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:

- ☐ Բացե՛ք բացառության դեպքում ստեղծված ընտրական տեղամասի ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:

---

- ☐ Եթե ամեն ինչ կարգին լինի, հաշվողները իրար պետք է խառնեն ընտրական տեղամասի շրջիկ (տեղափոխվող), հիմնական և բացառության դեպքում ստեղծված ընտրական քվեատուփերից դատարկած հատուկ ծրարները:

---

- ☐ Կնքե՛ք ստուգողական թերթերը: Կնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը, համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը և ստորագրե՛ք:

---

- ☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք տեսակավորել ընտրական քվեաթերթիկները:

### Նկատի՛ ունեցեք

- ✓ Առաջին հաշվողը. հատուկ ծրարից վերցնում է ընտրական քվեաթերթիկները, ստուգում է ընտրական քվեաթերթիկի վավերականությունը, հայտարարում է՝ ում է տրված ձայնը, ընտրական քվեաթերթիկներն ըստ ընտրական սուբյեկտներին տրված ձայների փոխանցում է երկրորդ և երրորդ հաշվողներին, անվավեր համարված ընտրական քվեաթերթիկները, կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները և անորոշ նմուշի քվեաթերթիկները փոխանցում է չորրորդ հաշվողին, հատուկ ծրարն առանձին է դնում:
- ✓ Հաշվողներն. առանձին-առանձին են դասավորում. քվեաթերթիկները՝ ըստ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայների, անորոշ նմուշի քվեաթերթիկները, անվավեր համարված ընտրական քվեաթերթիկները, կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները:

- ☐ Հանձնաժողովի հետ մեկտեղ մեկ առ մեկ քվեարկե՛ք կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները (այսպիսինի գոյության դեպքում): Որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան ընտրական հանձնաժողովի լրիվ կազմի մեկ երրորդի ձայներով (ոչ պակաս, քան 4 ձայն): Ձայները հավասար լինելու դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

---

- ☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք հաշվել անվավեր ընտրական քվեաթերթիկները և յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայները/ընտրական քվեաթերթիկները:

---

- ☐ Հայտարարե՛ք յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի կողմից ստացած ձայների և անվավեր քվեաթերթիկների թիվը և հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգե՛ք տվյալների ճշգրտությունը: Հանձնաժողովի քարտուղարը տվյալները պետք է մուտքագրի քվեարկության օրվա գործավարության մատյանի 6-րդ էջում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:

---

- ☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք կապել և կնքել. անվավեր ընտրական քվեաթերթիկները (առանձին են կնքվում այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկները, այսպիսինի գոյության դեպքում), յուրաքանչյուր ընտրական թեկնածուի պատկանող ընտրական քվեաթերթիկները:

  Յուրաքանչյուր թեկնածուի պատկանող ընտրական քվեաթերթիկների փաթեթի վրա նշեք ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի անվանումները և համարը, թեկնածուի տվյալները (անունը և ազգանունը) և ընտրական քվեաթերթիկների թիվը:

  Անվավեր ընտրական քվեաթերթիկների փաթեթների վրա պետք է նշվի ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի անվանումները և համարը, ընտրական քվեաթերթիկների տեսակը և թիվը:
  Փաթեթների կնքման գծի վրա ստորագրե՛ք հաշվողների հետ:

□ Հանձնաժողովի քարտուղարը, Ձեզ հետ համաձայնեցնելով, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելիս` պետք է նկատի առնվեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալները:
Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հավաստվում է նրանց ներկա գտնվելը ընտրատեղամասում: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը պետք է վավերացնեք հանձնաժողովի հատուկ կնիքով:
Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը գրանցում է գրանցամատյանում ելից փաստաթղթերի մասում:

**Նկատի՛ ունեցեք.** Արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ տեղ գտած տվյալներն ուղղել:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու կարգը տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգում` Մաս III, Գլուխ III, ենթագլուխ` «Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը»:

---

□ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճեններ տրամադրելիս (պահանջելու դեպքում)` հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրե՛ք և վավերացրե՛ք դրանք հանձնաժողովի հատուկ կնիքով: Ֆոտոպատճենը ստացող անձը գործավարության մատյանում ստորագրությամբ է հաստատում այն ստանալը:

**Նկատի՛ ունեցեք.** Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/ուղղման արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում), պահանջի հիման վրա, տրվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից, պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

- ☐ Առանձին-առանձին փաթեթներով կնքե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի կնքված փաթեթի վրա ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները) քվեարկության օրվա գործավարության մատյանը, դիմում-բողոքներների հետ:

  **Հիշե՛ք**` գրանցամատյանը և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը չեն կնքվում:

---

- ☐ Կնքված ընտրական փաստաթղթերը զետեղե՛ք մեծ արկղի կամ տոպրակի մեջ և տարե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Արկղից/տոպրակից առանձին` տարե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ուղղման արձանագրության հետ (այսպիսինի գոյության դեպքում) և գրանցամատյանը, հանձնաժողովի անդամների բացատրագրերով (այսպիսինի գոյության դեպքում), ինչպես նաև քվեարկության օրվա գործավարության մատյանի և դիմում-բողոքների կնքված փաթեթը:

**Նկատի՛ ունեցեք.**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է անհապաղորեն համապատասխանաբար արձագանքել դիմումին/բողոքին (այսպիսինի գոյության դեպքում), և վերացնել առկա խախտումը:

Քվեարկության օրվա դիմումի/բողոքի հետ կապված հանձնաժողովի նախագահի կողմից իրականացվելիք լիազորությունները մանրամասնորեն տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգում` Մաս IV: